նէից, որ կարեւոր համարէին զիրկութիւն Խաչին՝ քան թագաւորին իւրեանց, և թախանձանօք խնդրէին զայն, այլ նոքա ոչ եառուն։

Եմուտ Սուլթանն 'ի Տիրերիա և կոմսուհի տէր քաղաքին յանձն արար զայն 'ի ձեռս Նորա, և ինքն մեկնեցաւ 'ի քաղաք առն իւրոյ 'ի Տրապոլիս։ և Սալահատտին աւերեաց զեկեղեցին զոր կանգնեալ էր 'ի նմա կոմսն Տանգրի և կացուցեալ եպիսկոպոս (1099)։

Ի ժամանակի պատերազմիս յայսմիկ զօրք այլազգեաց ելեալ բնակեցան 'ի վանօրայս Թափորական լերին, և 'ի ձեռն կրօնաւորաց ամրացուցին զբերդն անդ, եւ յամին (1220) Արաբացիք տապալեցին զամրոցն և զաշտարակն, որ յանկիւնս յարեւելից հարաւոյ, աւերեցին և զվանօրայս։

Սալահատտին զկատարեալ յաղթութիւնն զոր տարաւ 'ի պատերազմին Տիբերիոյ, փութաց առաւել եւս կատարելագործել զայն՝ տիրելով այլոց քաղաքաց եւս. վասն որոյ բաժանեաց զզօրս 'ի դունդս դունդս, և կացուցեալ զօրավարս 'ի վերայ նոցա, արձակեաց 'ի շրջակայս Երուսաղէմի, և ինքն դէմ եդեալ գնաց 'ի վերայ Պաղեստինացի-դայ Սիդոնի և այլոց ծովեզերեայ քաղաքաց։ Իսկ զօրավարացն այնոցիկ արշաւեալ 'ի կողմանս կողմանս սրով և հրով՝ տիրեցին 13 հռչակաւոր եւ ամուր բերդից. առին զՆազարէթ. զտին զՍուֆուրիա դատարկ 'ի բնակչաց. տիրեցին Կեսարեայ Պաղեստինացւոյ. անձնատուր եղեւ Արսուֆ. հասին 'ի Սեբաստիա և զմեծ եկեղեցի Յովհաննու Կարապետին փոխեցին 'ի մզկիթ. առին զՆապլուս, և զայլ քաղաքս և զամրոցս. ժողովեցին աւար բազում և դերի, որոց ոչ դոյր թիւ։ Իսկ Սալահատտին էառ զՊաղեմայիս և զայլ ծովեզերեայ քաղաքս, պաշարեաց զՏրապոլիս, և խնդրէր զբերդն և զկին կոմսին որոյ այրն մեռեալ էր չարաչար. և նա խնդրեաց պատանդս յերեւելի արանց, զի գնասցէ առ նա և լինիցի նմա կին։ Եւ առեալ զնոսա 'ի ներքս՝ եհատ զգլուխս նոցին և ընկէց արտաքս, ընդ որ զարհուրեալ 'ի բաց գնացին. Վ.-Բ.-Ն. Եր. 177։

Այս եհան Սալահատտին զթագաւորն Երուսաղէմի զԳուիտոն եւ զորս ընդ նմա 'ի բանտէ և խոստացաւ թողուլ զնոսա ազատս, եթէ թողուցուն Լատինք զայլ քա-